



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿ ԽՐԱՄԲԱԼ Ե

(ԿԱՏԱԿԵՐԴՈՒԹԻՒՆ ՄԵԿ ԱՐԱՐ)

ՎԵՐԱՀԱՒԱՔԵՑ'

Ք. ՃՊՏՈՒԻՆԻ

Տպարան

Գրատուն

Կազմատուն

G. DONIGUIAN

Rue Nahr - St. Michel

Beyrouth, Liban

Հրատարակութիւն ՍԻՀՈՒՆ Մատենաւորի Թիւ 21

“ՊԱՇՏՈՆՍ ԽՐԱԲԱԼ Է”

(ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵԿ ԱՐԱՐ)

ՎԵՐԱՀԱՌԱՔԵՑ

Ք. ՃՊՏՈՒԽԻ

Տպարան

Գրասուն

Կազմատուն

G. DONIGUIAN

Rue Nahr - St. Michel

Beyrouth, Liban

“ՊԱՇՏՈՆՍ ԽՈՄԲԱԼ Ե.,

ՏԵՍԻԼ Ա.

Ժ Ի Ւ Լ

Ժիիլ. — Ո՞հ, այս ի՞նչ երջանկութիւն է: Հինգ տարիէ ի վեր չեմ տեսել Մարկոփթը, և ահա այս երեկոյ նամակ մը ստացայ իրմէ: Տեսէք թէ ինչ է գրել իմ պաշտելին: (Կը կարդայ) «Սիրելի Ժիլն, Այս երեկոյ ժամը 10ին եղիր Օպերայում, և ինձ սպասիր թիւ 4 օթեակում: Մարկոփթ»: Դեռ ժամը 9ն է: Երեւակայեցէք թէ մէկ ժամէն պիտի տեսնեմ իմ սիրելին: Բայց ինչպէս գուրս ելլելու է հոսկէ: Իմ կինը շատ ու շատ նախանձում է, ու ամէն երեկոյ պառկելուց յետոյ գալիս է և նայում թէ մի գուցէ թռած լինիմ իմ վանդակէն: Բայց անհրաժեշտ է երթալ, անպատճառ զնալու եմ: Պէտք է մի միջոց խորհրծ: (Կը խորհի), էվրէքա՞ն, գտա՞յ: Այո, շատ լաւ միջոց է: Հիմա կը գտնեմ մի աններելի յանցանք, մի պատրուակ և կը գժուռիմ իմ կողջ հետ, այնպէս որ մէկ մ'ալ չի համարձակուիր գալ իմ սենեակը: Փորձենք: (Աւրծէնելով անկողինը, կ'սկսի պոռալ) Ինչ խայտառակութիւն է այս, ժամը 9ն է և տակաւին իմ անկողինը չէ շտկած, սա տո՞ւն է թէ դժոխք: Ոչ, ոչ, կարելի չէ համբերել, պէտք է աւելի խիստ լինի:

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆ, Ք Լ Ե Ծ Ե Կ Ա Ս Թ Օ Ն

Քլէմ. — (Մտնելով) Ի՞նչ է պատահեր սիրելիս, ի՞նչ ես դարձեալ բորբոքեր:

Ժիիլ. — (Բարկութեամբ) Սա է պատահել որ միշտ նոյն անկարգութիւնը տիրել է այս տան մէջ: Ո՞ւր է

— 3 —

Տայ բանեց

Չնացել կասթօն, այս ժամուս դեռ անկողինը չէ շրակած: Ուզում եմ մի քիչ հանգստանալ և ահա թէ ի՞նչ գիճակի մէջ եմ գտնում իմ անկողինը:

ԿԱՍԹՈՆ. — Պարոն, դեռ մի քիչ առաջ ես շիտկեցի ձեր անկողինը:

Քլէմ. — Այ՛ս, Ժիւլ, ես ալ ներկայ էի երբ նա շտկեց:

Ժիիլ. — (Մեկուսի) Վայ չար սատանայ: Ուրիշ փորձելու է: Լաւ, լաւ, մի անգամ ալ շտկիր: Ես լաւ հմ զգում որ դուք համաձայնուել էք որ ինձ բարկացնէք, դուք ուզում էք զիս սպաննել: Տեսէք, տեսէք, հոս բուլոր գիրքերս խառնել են, ով է իրաւունք ստացել խառնել իմ գրքերը: Զգիտեմ ո՞վ է այս տունի տէրը, ես թէ դուք: (Կասթօն կը մեկնի):

Քլէմ. — Հանդարտէ սիրելի Ժիւլս, զու ինչ որ պատճառ ես փնտում բարկանալու: Այս վայրկեանիս զու ինքդ խառննեցիր գրքերը: Քենէ զատ ոչ ոք ձեռք չէ դպցուցել քու գոյքերուն:

Ժիիլ. — Լահցէք, զուք այլեւս չափը անցնում էք, գուք ուզում էք զիս խեղդել, ես դեռ չեմ գժուել, տեսէք, երկու ժամ է որ ուզում եմ մի սիրառ ծխել և լուցկի չեմ գտնում: Ասոր ալ մի արդարացուցիչ տօկում մէնտ գտէք տեսնեմ: Ո՞ն:

Քլէմ. — Բայց սիրելի Ժիւլս, ճշմարիտ է որ շտատրօրինակ էք դառնում: Տեսէք ահա ես եմ դրել իմ ձեռքով երկու տուփ լուցկի այս սեղանի վրայ:

Ժիիլ. — Սրանք գտատրկ են, (Կը բանալ եւ կը բափէ: Մեկուսի) Վայ չար սատանայ, այս ալ չի յաջողեցաւ: Բայց պէտք է մի կերպ պրծիլ այս սեղանի վրայ: (Բարձր) Ո՛չ, ո՛չ, ես երբեք չպիտի կարողանամ երջանիկ լինել: Դուք ամէնքդ աշխատում էք զիս գժբաղդացնել, կորէ՛ք, գուրս գնացէ՛ք, շուտու: Ես լաւ եմ հասկանում, այն օրից որ այն պարոնը սկսեց թղթակցիլ քեզ հետ, իմ կեանքը զժբաղդացաւ:

Քլէմ. — Ի՞նչպիսի պարոն է այդ Ժիւլ: Ո՞հ, Ասուած իմ, զու գժուել ես, Ժիւլ, զու խելքդ կորուսել

ես: Սակայն պէտք է գիտնաս որ այդ արարքդ շատ սուշ զի պիտի նստի քեզ, ու վերջը պիտի զզջաս:

Ժիիլ. — Տեսէք, տեսէք, սպառնալիք է ընում անպիտանը: Կորսուի՛ր, և մէկ մալ ոտքդ մի կոխեր իմ սենեակը: Անչնորհք:

Քէկի՛. — Հաւ գնում եմ, բայց դու ա'լ չի համարձակուես իմ սենեակը գալ, հասկանո՞ւմ ես:

Ժիիլ. — Ոչ, ոչ, անհոգ եղիր:

Քէկի՛. — Դարձեալ կրկնում եմ, հասկանո՞ւմ ես, չե՞ համարձակուես գալ իմ ննջասենեակը, (կը մեկնի):

Ժիիլ. — Ոտքերը ջախջախուի ով որ գայ: Վերջապէս յաջողեցայ, ինդ թլէս, որքան սաստիկ բարկացաւ, Այլեւս վախը անհետացաւ, մէկ էլ չի գար իմ սենեակը, որով ես ալ կարող կը լինեմ այցելութեան երթալ իմ սիրելի Մարկոփին: Երթամ մի քիչ զարդարուիմ: (Զախ կոլմէն կ'անհետի: Դուռը կը զարնուի) Մտէ՛ք: (Կը բակին) Մտէ՛ք: (Դարձեալ) Մտէ՛ք:

ՏԵՍԻԼ Գ.

Ն Ա Ց Ն Ե Ւ Լ Ի Ւ Դ Ո Ր

Լին. — (Մտնելով բարեւի կեցած) Կապիտան:

Ժիիլ. — (Ներսին) Ով է ա'ն:

Լին. — Ես եմ կապիտան, Լինդորը:

Ժիիլ. — (Ներսին) Դօ՞ւն ես Լինդոր:

Լին. — Այո՛, կապիտան, ես եմ Լինդորը:

Ժիիլ. — (Մտնելով) Հաւ ասա տեսնենք Լինդոր, ի՞նչ նորութիւն կայ:

Լին. — Առանձին ոչինչ կապիտան, առողջութիւնդ կապիտան:

Ժիիլ. — Հաւ, ասա տեսնեմ, ի՞նչո՞ւ եկար,

Լին. — Ես եկայ կապիտան:

Ժիիլ. — Այո՛, դուն եկար:

Լին. — Բայց ո՞չ կապիտան, ես չեկայ:

Ժիիլ. — Ի՞նչպէ՞ս թէ դուն չեկար, տիմար:

Լին. — Այսինքն կապիտան ես իմ կամքովս չեկայ:

Ժիիլ. — Հապա՞:

Լին. — Գնդապետը կապիտան:

Ժիիլ. — Է՛նչ է եղել գնդապետը:

Լին. — Գնդապետը զիս ուղարկեց կապիտան:

Ժիիլ. — Ո՞ւր է ուղարկել, պիտի ասե՞ս թէ ոչ:

Լին. — Կ'ասեմ, կ'ասեմ, կապիտան, բայց մի աճա-

պարէք որ չի մոռանամ: Գնդապետը զիս ուղարկեց:

~~Այս~~ Թօւր: Զեղ մօտ: Այո՛ կապիտան գնդապետը զիս ուղարկեց ձեզ մօտ այս նամակը յանձնելու:

Ժիիլ. — Ի՞նչո՞ւ չես տար երկու ժամէ նամակը անմի՛տ:

Լին. — Կամաց կամաց կապիտան:

Ժիիլ. — Ուրիշ ի՞նչ կայ Լինդոր զօրանցում:

Լին. — Առանձին ոչինչ կապիտան:

Ժիիլ. — Զինուորները բոլորն ալ զօրանցո՞ւմ են:

Լին. — Ոչ կոպիտան:

Ժիիլ. — Հապա ասա տեսնեմ ո՞վ է մնացել դուրսը այս ժամուս:

Լին. — Մի բարկանաք կապիտան, ես իմ կամքով չէ որ մնացել եմ դուրսը, գնդապետն է ուղարկել:

Ժիիլ. — Այդ գիտեմ տիմար: Քինէ զատ բոլորն ալ զօրանցո՞ւմ են:

Լին. — Այո՛ կապիտան, բոլորն ալ, բացի Բաւելոնից:

Ժիիլ. — Ասա տեսնեմ, ուր է գնացել Բաւելոնը:

Լին. — Բաւելոնը կապիտան, այնքան շատ, այնքան շատ էր հարբել որ թաւալում էր խոզի նման կապիտան: Խսկ տասնապետը նրան բանտարկեց կապիտան:

Ժիիլ. — Շատ լու է արել: Խսկ դու Լինդոր, դու չե՞ս խմում:

Լին. — Ես կապիտան, ես խմում եմ կապիտան, բայց միայն ջուր եմ խմում կապիտան:

Ժիիլ. — (Մեկուսի) Իրաւ որ շատ զուարձալի մարդ է, և ի՞նչ տիմար:

Լին. — Այս կապիտան:

Ժիհլ. — Բայց ժամանակը անցնում է և պէտք է երթալ: Ո՞չ, ինչ լաւ գտղափար մը յղացայ: Օ՞հ հիանալի: Արի սըւոր իմ գիշերանոցս և գտակս հագնեմ թող պառակի իմ անկողնում: Տիկինն ալ եթէ գայ, պիտի կարծէ թէ քնացել եմ, և պիտի մեկնի: Ճիշդ ալ յարմար է աւանակը:

Լին. — Լաւ, ես գնա՞մ կապիտան:

Ժիհլ. — Սպասի՛ր Լինդոր: Մօտ եկու տեսնեմ:

Լին. — Հրամայեցէք կապիտան:

Ժիհլ. — Ասա տեսնեմ Լինդոր, դու կարո՞ղ ես խըռաբացնել:

Լին. — Խոմբացնել, ինչպէս թէ խոմբացնել կապիտան:

Ժիհլ. — Հապա պարզապէս խոմբացնել:

Լին. — Լաւ, ասենք թէ խոմբացրի, յետոյ:

Ժիհլ. — Խոմբացրու տեսնեմ:

Լին. — Ո՞չ կապիտան, չեմ կարող ձեր ներկայութեանը խոմբացնել: Ամօթ է:

Ժիհլ. — Բայց փոյթ չէ, ես քեզ հրամայում եմ խըռաբացրու:

Լին. — Կապիտան, եթէ ուզում էք երթամ բուռլօնը ուղարկեմ: Նա երբ հարբած է լինում, ճիշդ որ խոզի նման է խոմբացնում,

Ժիհլ. — Ինձ բուռլօնը չէ հարկաւոր, դու խոմբացրու ապա թէ ոչ քեզ կը բանտարկեմ: Հասկանո՞ւմ ես:

Լին. — Ոչ, ոչ կապիտան կը խոմբացնեմ:

Ժիհլ. — Ուրեմն սկսիր:

Լին. — Իս, խո, խո:

Ժիհլ. — Օ՞հ, օ՞հ, հիանալի, հիանալի: Լաւ հիմա գնա պառկիր:

Լին. — Գլխուս վրայ կապիտան: (Դեպի դուռը կ'երքայ):

Ժիհլ. — Ո՞ւր ես գնում Լինդոր:

Լին. — Զօրանոց կապիտան:

Ժիհլ. — Ի՞նչ ընելու:

Լին. — Պառկելու կապիտան: Կապիտանը հրամայեց որ գնամ պառկիմ կապիտան:

Ժիհլ. — Բայց ո՞չ, ապուշ, պէտք է հոս պառկես:

Լին. — Այդ ինչպէս կապիտան:

Ժիհլ. — Այս, պէտք է հոս պառկես, իմ անկողնում:

Լին. — Ո՞չ, ո՞չ, կապիտան, մի պնդէք, ես չեմ կարող անել այդ բանը: Երբե՞ք:

Ժիհլ. — Չէ՞ որ ես հրամայում եմ քեզ Լինդոր:

Լին. — Ոչ, ոչ, կապիտան, գուցէ մի ուրիշ զինուոր համարձակուի, բայց ես չեմ կարող ձեզ հետ մէկ վերմակի տակ պառկել:

Ժիհլ. — Բայց ո՞չ, տխմար, ես չպիտի պառկիմ, միայն դու պիտի պառկիս իմ անկողնում և խոմբացնես:

Լին. — Իսկ գուք կապիտան:

Ժիհլ. — Ես գնում եմ զօրանոց: Գնդապետը ինձ է կանչել:

Լին. — Այս ժամուս կապիտան:

Ժիհլ. — Այս՛:

Լին. — Գնդապետը քնացած է կապիտան:

Ժիհլ. — Այդ քեզ չէ հարկաւոր, կատարիր ինչ որ քեզ հրամայում եմ: Շուտ հանուիր: ապա թէ ոչ քեզ կը բանտարկեմ:

Լին. — Կամենաք բանտարկեցէք կապիտան, կամենաք կախաղան հանեցէք: Ես չեմ աներ այդ: Անվայիլ է մի զինուորի իւր կապիտանի ներկայութեանը հանուել:

Ժիհլ. — Լաւ մի հանուիր, միայն գտակս գլուխդ գիր և պառկէ: Բայց լաւ մտիկ ըրէ ինչ որ պիտի ըսեմ: Վերմակը քաշիր գլխուդ և խոմբացրու:

Լին. — Կապիտան, քնեմ այնպէս խոմբացնեմ թէ արթուն խոմբացնեմ:

Ժիհլ. — Ապուշ, ինչպէս ուզում ես այնպէս խոմբացրու, միայն թէ խոմբացրու հասկցա՞ր Լինդոր:

Լին. — Այս՛, կապիտան, միայն թէ խոմբացնեմ: (Կը պառկի եւ կը խոկայ):

ԺԻՒԼ. — Դեռ հիմա չէ, երբ ես մեկնիմ: Երբոր ծառան կամ ուրիշ մէկը ներս մտնէ, բնաւ չես խօսիր և կը խոմբացնես հասկցա՞ր:

Լին. — Այո՛, կապիտան: Խոկ եթէ տիկինը գայ կապիտան, դա՞րձեալ խոմբացնիմ:

ԺԻՒԼ. — Բայց հարկաւ: Մասնաւորաբար եթէ տիկինը գայ պէտք է խոմբացնես: Եւ վայ քեզի եթէ բառ մը փախցնես բերնէդ, քեզ կ'սպաննեմ:

Լին. — Հասկցայ կապիտան, հասկցայ, զիս կ'սպաննէք: Ահա կը խոմբամ, խը՛ռ: խը՛ռ....

ԺԻՒԼ. — (Սեկուսի) Լաւ պիտի կատարի իւր գերը այս ապուշը: Ես երթամ, ժամանակն է արդէն և Մարկոփթինն է սպասում Օպերայում: (Կը մեկնի):

Լին. — Այս ինչ փորձանքն ընկայ Տէր Սատուած, եթէ յանկարծ քունս տանի և չի խոմբացնիմ, կապիտանը զիս սպաննել կուտայ: Ով Սուրբ Բեռնարդինս, գուն զիս մի քնացներ: Բայց կարծեմ մէկն է գալիս, խորմացնիմ, խը՛ռ, խը՛ռ....

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆ ԵՒ ԿԱՍԹՈՒՆ

ԿԱՍ. — (Սենելով ձեռքի սրուակ եւ բաժակ) Տէր իմ, ահա լիմօնատդ և բաժակը: Հոս կը դնեմ: (Սեկուսի) Կ'երեւի քներ է, խեղճը այնքան բարկացաւ որ քունը տարել է. (Բարձր) Ես կը մեկնիմ պարոն, եթէ բանի մը պէտք ունենաք, զանգը սեղանին վրայ է: (Կը մեկնի):

Լին. — (Ելնելով) Ի՞նչ, լիմօնա՛տ, այդ ի՞նչ հրաշալի բան: արդեօք մէկ մը խմեմ կ'ըսէք: Բայց ոչ, ոչ, ի՞նչուս պէտք: Ախ, ի՞նչքան ալ ծարաւ եմ: Հոդս, ի՞նչ կ'ուզէ թող լինի, ես պիտի խմեմ, թող քանի մը վայրկեանի համար ալ ես կապիտան լինեմ: (Կը խմէ) Օխ, սիրոս հովացաւ: Եկ մէկ էլ խմեմ (Կը խմէ): Այս ալ վերջը: Ճիշդ որ աւանակ պատերազմին գաշտը, կրակի տոջեւ գուն գնա, իսկ այս տեսակ հրաշալի հեղուկները կապիտանները խմեն: Բայց կարծեմ ձայն կայ, խը՛ռ, խը՛ռ....

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆ ԵՒ ՔԼԵՌ

ՔԼԵՌ. — (Սենելով նրազով) Կ'երեւի քներ է, իմ խեղճ ժիւլս, որքա՞ն բարի է: Ժիւլ, սիրելի ժիւլ, արի հաշտուենք, ես չեմ կարող քեզ պէս ամուսնի հետ երկար գժտուած մալ: (Կը համբուրէ) Աղաջում եմ, արի՛, հաշտուենք: Պարապ տեղը քնած մի ձեւացնել, ժիւլ, չես կարող զիս խարեւ: Զարթի՛ր, զարթի՛ր: Զե՞ս զարթնում հա՛, վեր կ'ա՛յ, ապա թէ ոչ անկողինը կ'այրեմ:

Լին. — (Սարսափած վեր ցատկելով) Աստուծոյ սիրոյն, մի այրեր տիկին, կը վեր կենամ: Խռ, խռ, խռ:

ՔԼԵՌ. — Ո՞չ, Աստուծած իմ օգնութիւն, այս ո՞վ է: Գող կայ, գող:

Լին. — Ոչ տիկին, ես գող չեմ, խռ, խռ, խռ:

ՔԼԵՌ. — Բայց ո՞վ ես գուն, ի՞նչօ՞ւ եկար հոս, ասա՛, խօսէ:

Լին. — Չեմ կարող խօսել տիկին, արգիլուած է, խռ, խռ, խռ:

ՔԼԵՌ. — Դուրս ասկէ ապիրատ, գուրս չուտ:


Լին. — Սպասիր տիկին, խռ, խռ: Անկարելի է տիկին, խռ, խռ:

ՔԼԵՌ. — Դուրս չուտով գուրս, ապա թէ ոչ կը պոռամ:

Լին. — Մի պոռար տիկին կ'երթամ, բայց թէ ո՞ւրտեղից, գուրս գոց է:

ՔԼԵՌ. — Աճապարէ, գուրս թոփր ապա թէ ոչ քեզ կը սպաննեմ: (Գրենց եւալին վրան կը նետէ):

Լին. — Դուրս թոփմ, գուրս թոփմ, բայց ո՞ւսկից թոփմ, թէ որ մէջքս կոտրեմ:

ՔԼԵՌ. — Պատուհանից, գուրս: 

Լին. — Բայց թէ ո՞ւր գուրս կոտրած այս պատուհանից:

ՔԼԵՌ. — Փողոցը:

Լին. — Խոկ այնտեղից:

ՔԼԵՌ. — Զահաննամը:

Լին. — Մտիկ ըրէ տիկին: Ես հոս պառկած էի և ի

կարգին խռմբացնում: Եթէ ոեւէ բան պատահի պատասխանառուն դուք էք:

Քլէ՛ն. — Դուքս եմ ասում, դուրս, ապա թէ ոչ....

Լին. — Գնում եմ, գնում եմ տիկին: (Կ'երքայ դեպի պատուհանը, վայրկեան մը կ'անհետանայ: Դրսեն ունի հաջոցներ, դարձեալ կ'երեւի): Տիկին այն երկու գաղանները կը թողո՞ւն որ երթամ, զիս պիտի բզկտեն: Ո՞չ, ո՞չ, ինչ ուզում ես ասա, ես ինձ արուած հրամանը պիտի գործադրեմ: Ես պէտք է պառկիմ և խռմբացնեմ խռ, խռ: (Կը պառկի):

Քլէ՛ն. — Այս ի՞նչ փորձանք է Տէր Աստուած, անչընորչ ամուսինս տեսէք թէ ինչպիսի մէկը թողեր է իւր տեղ: Բայց ո՞վ ես դուն, ինչո՞ւ եկար հոս, ո՞ւրէէ եկար: Ի՞նչ կը նշանակէ այս: Ո՞հ, հիմա կը հասկնամ: Դուն այն պարոնն ես, որ երկար ատենէ ի վեր կ'ուզէ զիս մոլորեցնել: Բայց պէտք է գիտնաք որ անամօթ պարոն, ձեր գործած արտքը ոճիրէ մը աւելի ծանր է, և ես ձեզ պիտի խայտառակիմ հրապարակաւ:

Լին. — Անամօթ, պարո՞ն, ե՞ս: Շիտակը չիմ հասկանում: Խռ, խռ:

Քլէ՛ն. — Բայց ո՞վ ես դուն եթէ պարոնը չիս: Ի՞նչ ես անում այստեղ:

Լին. — Զէք տեսներ խռմբացնում եմ: Խռ, խռ:

Քլէ՛ն. — Ինչո՞ւ, ո՞վ է հրամայել քեզ:

Լին. — Տիկին խնդրեմ, մի բարեկանաք, ես չիմ կարող խօսել, զերջը կը զնդուածարէ զիս:

Քլէ՛ն. — Ո՞վ, ինչո՞ւ համար:

Լին. — Արգիլուած է ասում եմ Տիկին: Կապիտանը արգիլեց, ասաց որ զիս օպաննել կուտայ եթէ չի խռըմբամ: Բայց չիմ կարող ասել, չիմ կարող: Խռ, խռ:

Քլէ՛ն. — Ուրեմն Ժիւլը պատուիրեց քեզ խռմբացնել հա՞:

Լին. — Այսո՛ տիկին: Կապիտանը ասաց որ հոս պառկիմ, և ով որ գայ չգայ խռմբացնեմ, և եթէ տիկինը

դայ, աւելի խռմբացնեմ: Բայց մի ասէք իրեն, վերջը զիս կ'սպաննի: Խռ, խռ:

Քլէ՛ն. — Այդպէ՞ս ըստւ: Իսկ ինքը ուր գնաց գիտե՞ս:

Լին. — Ասաց որ զօրանոց էր գնում, բայց կարծեմ սուս է:

Քլէ՛ն. — Բայց գու ո՞ւրկէ եկար, և ո՞վ ես:

Լին. — Ե՞ս տիկին, ես ես եմ:

Քլէ՛ն. — (Սեկուսի) Իրաւ որ տխմար է: (Բարձր) Դու ո՞վ ես, անունդ ի՞նչ է:

Լին. — Ե՞ս տիկին, ես Լինդորն եմ:

Քլէ՛ն. — Լինդորը ո՞վ է:

Լին. — Լինդորը 4րդ գունդի զինուորն է:

Քլէ՛ն. — Դու զինուոր ես: Այս ինչ անհասկնալի առեղծուած է Տէր Աստուած: Հապա Ժիւլը ո՞ւր է գնացել այս ատեն: (Սեղանին վրայ նամակը նեմարելով կ'առնէ եւ կը կարդայ): «Սիրելի Ժիւլս, այս երեկոյ ժամը 10ին եղիր Օպերայում և ինձ սպասիր թիւ 4 օթհակում: Մարկոսիթ», Ո՞հ, գաւաճան, հիմա կը հասկնամ նիւթած դաւդ: Ո՞հ, Աստուած իմ, գէշ եմ զգում ինձ:

Լին. — Մի՛ վախենաք տիկին, ես հոս եմ: Առ մի քիչ լիմօնատ խմէր կը լաւանաս: Զե՞ս ուզում, աւելի լաւ, ես կը խմէմ: Յո կենացդ տիկին: Լաւացա՞ր տիկին, լիմօնատ խմէցի:

Քլէ՛ն. — Օպերայում, Մարկոսիթ որքան դժբաղդ եմ:

Լին. — Մի՛ տխրէք տիկին, կ'անցնի:

Քլէ՛ն. — Լաւ, Լինդոր, պատմիր, մի ոեւէ բան պատմիր: Ո՞հ, կը խեղդուիմ:

Լին. — Մի՛ խեղդուիք տիկին, կը պատմեմ, կը պատմեմ բայց ի՞նչ պատմեմ:

Քլէ՛ն. — Պատմի՛ր, պատմի՛ր, ի՞նչ կայ զօրանոց ցում:

Լին. — Առանձին ոչինչ տիկին: Հա՛, լաւ միտքս ընկաւ: Զօրանոցում կայ մի զինուոր Բուռլօն անուամբ:

ՔԼԵՌՈՒ. — Լաւ, պատմիր Բուռլօնի մասին։
 Լին. — Պատմեմ տիկին պատմեմ, Բուռլօնը միշտ
 հարբած է լինում, և տասնապետը նրան բանտարկեց
 տիկին։
 ՔԼԵՌՈՒ. — Օպերայում, Մարկովթ։
 Լին. — Կարծեմ թէ տիկինը փախցրեց։
 ՔԼԵՌՈՒ. — Լինդո՞ր, դու գիտե՞ս երգել։
 Լին. — Ինչպէս չէ տիկին, թէ՛ կ'երգեմ և թէ կը
 պարեմ։
 ՔԼԵՌՈՒ. — Լաւ երգիր ու պարիր տեսնեմ։
 Լին. — Շատ լաւ տիկին։ (Կ'երգել եւ կը պարե)։
 ՔԼԵՌՈՒ. — Ո՞հ, ի՞նչ լաւ կ'երգես և կը պարես Լին-
 դոր։
 Լին. — Հաւնեցար տիկին, լաւ պարեցի։
 ՔԼԵՌՈՒ. — Այս՛, շատ լաւ, շատ լաւ։
 Լին. — (Մեկուսի) Կեցցե՞ս Լինդոր, կեցցես, Մարդ ոչ
 ուտի, ոչ խմի, այսպիսի տիկնոջ քով երգի ու պարի։
 (Բարձր) Բայց Տէր Աստուած, ի՞նչպէս մոռցայ, ինձ հրա-
 մայուած էր չի խօսիլ և միայն խռմբացնել։ (Անկողին
 կը մտնե եւ կը խոկայ)։
 ՔԼԵՌՈՒ. — Ի՞նչ եղաւ քեզ Լինդոր։
 Լին. — Թողէք տիկին Աստուածոյ սիրոյն թողէք,
 պէտք է որ խռմբացնեմ։
 ՔԼԵՌՈՒ. — Ոտնաձայներ կան, կարծեմ ժիւլն է գա-
 լիս, Քաշուիմ իմ սենեակը, և իրեն լաւ դաս մը տամ։
 (Կ'երքայ)։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆ ԵՒ ԺԻՒԼ, ՑԵՏՈՑ ՔԼԵՌՈՒ

ԺԻՒԼ. — (Մենելով) Աւա՛զ, որքան յուսախար եղայ։
 Որքան փոխուել է Մարկառիթը։ Բնաւ չէ յիշեցնում
 նախկին օրերը։ Որքան անմտութիւն արի պատասխա-
 նելով իւր հրաւէրին։ Մեղք, (Նոմարելով) Լինդորը որ կը
 խոկայ) Այս աւանակը դեռ կը խռմբացնէ։ Տէր Աստուած
 որ կինս եկած չը լինէր։ Արթնցնենք սա տիսմարը։

ՔԼԵՌՈՒ. — (Կ'երս մտնելով) Դեռ չե՞ս քնել ժիւլ։
 ԺԻՒԼ. — Ո՞չ, ի՞նչ ես եկել հոս։
 ՔԼԵՌՈՒ. — Այդ ի՞նչ խոժոր դէմք է ժիւլ։
 ԺԻՒԼ. — Կը հարցնե՞ս։
 ՔԼԵՌՈՒ. — Բայց չէ՞ մի որ քեզ հետ հաշտուեցինք։
 ԺԻՒԼ. — Ո՞վ է հաշտուել, Ես քեզ հետ չեմ հաշ-
 տուիր։
 ՔԼԵՌՈՒ. — Ինչպէս թէ ով է հաշտուել։ Դեռ քիչ առաջ
 չի հաշտուեցի՞նք քեզ հետ։
 ԺԻՒԼ. — Տիմար բաներ մի ըսեր։ Ես քեզ չեմ տե-
 սել։
 ՔԼԵՌՈՒ. — Իրաւ որ դու խելքդ կորուսել ես, և կամ
 թէ մութ լինելուն չես նշմարել։ Միթէ սրանից կէս ժամ
 առաջ քեզ հետ չի հաշտուեցի՞նք քու անկողնում։
 ԺԻՒԼ. — Անէ՛ծք, ո՞վ երկինք, ես իմ ձեռքօվա-
 քանդեցի իմ տան երջանկութիւնը։ Վա՛յ ինձ։
 ՔԼԵՌՈՒ. — Կը տեսնեմ որ հանգստի պէտք ունիս ժիւլ։
 Գիշեր բարի, Վաղը առաւօտ կը տեսնուինք։ (Կը մեկնի)։
 ԺԻՒԼ. — Ի՞նչ ըրի Տէր Աստուած, ի՞նչ յիմարու-
 թիւն գործեց այս անբան անասունը։ Ինչ գժոխքի մէջ
 ձգեց զիս։
 Լին. — Խռ, խռ։
 ԺԻՒԼ. — (Զարենելով) Դեռ կը խռմբացնե՞ս անձոռնի՛։
 Վեր կա՛ց, քեզի ապուշ, տիսմար, խայտառակ։
 Լին. — (Վեր ելնելով) Հրամայեցէք կապիտան։
 ԺԻՒԼ. — Լաւ խռմբացրե՞ր, անասո՞ւն։
 Լին. — Հիանալի կապիտան, այնպէս որ ամէն ժարդ
 զարմանում էր։
 ԺԻՒԼ. — Եիտակ ըսէ ապիքատ իմ գնալէս յիտոյ, ո՞վ
 եկաւ հոս։
 Լին. — Ոչ ո՞ք կապիտան։
 ԺԻՒԼ. — Ճիշդ ըսէ ստախօս, ապա թէ ոչ հիմա քեզ
 կը խեղդեմ։ (Կոկորդին կը բոնէ)։
 Լին. — Թողէք ըսէմ կապիտան, ծառան եկաւ լիմո-
 նատ բերեց։

Ժիիլ. — Ուրի՛շ, ուրի՛շ:
 Լին. — Ուրի՛շ, ուրի՛շ, ի՞նչ ուրիշ կապիտան:
 Ժիիլ. — Շուտ ըսէ, ուրիշ մարդ չեկա՞ւ:
 Լին. — Ուրիշ, այս, չեկաւ, ոչ, եկաւ, կապիտան:
 Ժիիլ. — Պիտի ասես թէ ոչ, քեզ կ'սպաննեմ:
 Լիկ. — Եկա՛ւ եկա՛ւ, տիկինը եկաւ, բայց ես այնպէս
 խռմբացնում էի կապիտան:
 Ժիիլ. — Տիկինը եկաւ ի՞նչ ըրաւ, շուտ ասա,
 շուտ:
 Լին. — Տիկինը եկաւ կապիտան, այսինքն առանձին
 չեկաւ կապիտան:
 Ժիիլ. — Հապա որու հետ եկաւ ըսէ տեսնեմ:
 Լին. — Տիկինը եկաւ կապիտան, ճրագին հետ ե-
 կաւ կապիտան, մօտեցաւ կապիտան, զիս շոյեց կապի-
 տան, փայտայեց կապիտան և վերջապէս համբուրեց կա-
 պիտան:
 Ժիիլ. — Ի՞նչ, խայտառակ, ինչպէս կը համարձակ-
 ուես ըսել: (Կ'ուզէ ծեծել):
 Լին. — Թողէք, թողէք, օգնութիւն մեռա՞յ:
 Ժիիլ. — (Թողլով) Շուտ ասա, յետոյ ի՞նչ եղաւ,
 շուտ:
 Լին. — Յետոյ կապիտան, յետոյ ասաց որ վեր կաց,
 եթէ ոչ վարագոյրները կրակի կը տամ ասաց կապիտան:
 Ես կապիտան, վախցայ կապիտան, վեր կացի կապիտան:
 Բայց ես այնպէս խռմբացնում էի կապիտան:
 Ժիիլ. — Գետինն անցնի խռմբացնելդ, ուրիշ ի՞նչ
 ասաց պատմի՛ր, շո՞ւտ:
 Լին. — Ուրիշ ասաց որ կապիտան, առանձին ոչինչ
 չասաց կապիտան: Սակայն կապիտան, առաջ կարծեց որ
 ես պարոնն եմ կապիտան: Եւ ասաց որ դուրս ելեմ
 կապիտան: Բայց ես այնպէս էի խռմբացնում որ չէի
 թողնում նրան խօսել կապիտան:
 Ժիիլ. — Յետոյ, յետոյ, ի՞նչ ասաց:
 Լին. — Յետոյ, ասացի թէ ես պարոնը չեմ, ասաց
 ուրիշն դու ո՞վ ես», ասացի «ես ես եմ», ասաց ոգու

ո՞վ ես», ասացի «ես լինդորն եմ», ասաց «լինդորը
 ո՞վ է», ասացի «լինդորը 4րդ գնդի զինուորն է, հենց
 որ իմացաւ թէ զինուոր եմ, սկսեց աւելի մեղմ զար-
 ուել հետու:

Ժիիլ. — Դեռ կը համարձակուե՞ս խօսիլ վատ, ըս-
 տորին, դաւաճա՛ն, դու անճռոնի արարած (Վզեն կը
 բոնի):

Լին. — Օգնութիւն, սատանաներ, օգնութիւն, գը-
 ժողքն ընկայ:

SԵՍԻԼ Է.

Ն 0 8 Ն Ե Ւ Ք Լ Է Ռ

Քլէ՛թ. — (Մսնելով) կեցի՛ր, Ժիւլ դուն իրաւունք
 չունիս պատժել այդ խեղճ զինուորը, որ պարզապէս
 քամաճոյքիդ խաղալիքն ես ըրեր:

Լին. — Այս՛ տիկին, այս՛:

Քլէ՛թ. — Հոս եթէ յանցաւոր մը կայ Ժիւլ, այն ալ
 դուն ես, և առաջին անգամ դուն պէտք է պատժուիս:
 Տե՛ս սա նամակը, տես և ամաչէ՛ գործած խայտառակու-
 թեանդ համար:

Լին. — Ի ոէր Աստուծոյ տիկին, զիս կ'սպաննէ:

Քլէ՛թ. — Մի վախնար Լինդոր, դու չես պատժ-
 ուիր:

Ժիիլ. — Այս՛, Քլէ՛թ, կ'ընդունիմ սխալս և արդէն
 զջացած եմ, Ներողութիւն կը խնդրեմ:

Լին. — Կապիտան ներիր ինձ մի բանտարկիր, մի
 սպաննիր ինձ: Ես միշտ խռմբացրի, հարցրէք տիկնոջ,
 եթէ կ'ուղէք դարձեալ խռմբացնեմ:

Ժիիլ. — Լոիր Լինդոր, եթէ տիկինը ինձ ների, ես
 ալ քեզ կը ներեմ, հասկցա՞ր:

Լին. — Տիկին ի ոէր Աստուծոյ ներիր զայն և ազա-
 տիր զիս կախաղանէն:

Քլէ՛թ. — Այս՛, Ժիւլ, կը ներեմ քեզ, բայց պէտք

է խոստանաս որ մէկ մ'ալ այդպիսի քան պէտք չէ պատահի:

Ժիիլ.— Այս', Քլէռ, կը խոստանամ, ես գլուխս քարին եմ գցել թէ որ մէկ մ'ալ այսպիսի արարքի մէջ գտնուիմ:

Լին.— Ես էլ գլուխս քարին եմ գցել որ մէկ մ'ալ ուրիշի տեղ խոժբացնեմ:

ՎԵՐՋ



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԺԻԻԼ = Հարիւրապետ

ՔԼԷՌ = Կինը

ԼԻՆԴՈՐ = Զինուոր

ԿԱՍԹՈՆ = Ծառայ

ՍԻՀ ՁԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐՈՒԿՈՒԹԻՒՆՆԵՐ

| | Լ. Դ. |
|-------------------------|-------|
| 1.— ՏՐՈՎԱԴԱՑԻ ՀՐԴԵՀԸ | 100 |
| 2.— ԹՈՐՈՍ ԾԱՌԱՅՑ | 75 |
| 3.— ՄԵՐ «ԱՄԱԹԷՅԹ»ՆԵՐԸ | 100 |
| 4.— ՀԱՅ ԴՊՐՈՑԸ | 100 |
| 5.— ԽԵԶՈՒՆ ԹՈՒԶԸ | 50 |
| 6.— ԱԻԱՐԱՑՐԻ ԱՐԺԻՒԽԸ | 150 |
| 7.— ԵՐԿՈՒ ԽՈՒԼԵՐ | 50 |
| 8.— ԱՍԽԱՑԻ ՍԱԳՐԻՉԸ | 50 |
| 9.— ԴՐՈՒՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ | 75 |
| 10.— ՍԱՏԱՆԱՑ | 40 |
| 11.— ԹԻՔ ԹԱՔ | 75 |
| 12.— ՄՈԼՈՐԵԱԼ ՃԱՄԲՈՐԴԸ | 50 |
| 13.— ԿԱՌ-ՔԻ ՄԸ ԱՌԿՎԸԸԸ | 50 |
| 14.— ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ | 50 |
| 15.— ԻՏԵԱԼ ՄԸ | 50 |
| 16.— ԶՈՐՍ ՍԱԼՈՐՆԵՐԸ | 30 |
| 17.— ՍԵՒ ԹԷ ՃԵՐՄԱԿ | 30 |
| 18.— ԵՐԿՈՒ ԾԱՑՐԱՑԵՊՆԵՐ | 100 |
| 19.— ԵՐԵՔ ՔԱԶԻՐ | 75 |
| 20.— ԱԿԱՄԱՑ ՄԵՌԵԼՆԵՐԸ | 50 |
| 21.— ՊԱՇՏՈՆՍ ԽՈ-ՄԲԱԼ Է | 50 |

Կ. Տօնիկեան Գրատունը կը հայրայքի ամեն տեսակ գիրքեր, կը կատարէ փոխանակութիւն՝ գրավանառ և նեղինակներու հետ, իր սեփական հրատարակութիւններով: